ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ Ի ԴԵՄՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՄԻՋԵՎ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 14 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի փետրվարի 15-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով փոխըմբռնման հուշագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) ստորագրվել է 2011 թվականի փետրվարի 15-ին:

Հուշագրի համաձայն՝ Եվրոպական միության խորհուրդը Հայաստանի Հանրապետությանն է տրամադրելու մինչեւ 100 միլիոն եվրո գումարի չափով մակրոֆինանսական աջակցություն, որից 35 միլիոն եվրոն՝ դրամաշնորհի տեսքով (այսուհետ՝ Դրամաշնորհ), եւ 65 միլիոն եվրո վարկ (այսուհետ՝ Վարկ): Այդ աջակցության նպատակն է օգնել ՀՀ կառավարությանը լուծել համաշխարհային տնտեսական եւ ֆինանսական ճգնաժամի հետեւանքով 2008 թվականի վերջին եւ 2009 թվականին առաջացած արտաքին ֆինանսական խնդիրները, որոնք ի հայտ էին եկել տնտեսական անկման պատճառով, ինչպես նաեւ լրացնել այն ռեսուրսները, որոնք տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունների եւ երկկողմ դոնորների կողմից՝ ի աջակցություն տնտեսական կայունացմանը, բարեփոխումների ծրագրի իրականացմանն ու տնտեսական անկման հետեւանքով առաջացած սոցիալական դժվարությունների լուծմանն ուղղված ջանքերի:

Ըստ Հուշագրի՝ աջակցության գումարները կտրամադրվեն երկու մասնավճարով՝ կախված Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ձեռք բերված՝ Ընդարձակ ֆինանսավորման համակարգի եւ Ընդարձակ վարկավորման համակարգի վերաբերյալ պայմանավորվածության կամ դրանց հաջորդող պայմանավորվածությունների իրականացման բավարար առաջընթացից, ինչպես նաեւ տնտեսական կայունացման եւ կառուցվածքային բարեփոխումներում ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ՝ Եվրոպական միության անունից հանդես եկող Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դրական գնահատականից: Ընդ որում, առաջին մասնավճարը կտրամադրվի Հուշագրի ուժի մեջ մտնելուց հետո առաջին օրվանից ոչ շուտ: Երկրորդ մասնավճարը կտրամադրվի նախորդ մասնավճարի տրամադրումից առնվազն 3 ամիս հետո՝ հաշվի առնելով այլ դոնորների կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացվող ֆինանսական աջակցության արդյունավետ կենտրոնացումը, ինչպես նաեւ հետագա ֆինանսական կարիքների զարգացումը:

Ըստ Հուշագրի 11-րդ հոդվածի՝ մակրոֆինանսական աջակցությունը կիրակա-նացվի այն ընկալմամբ, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները կշարունակեն պահպանել իրավունքի գերակայությունը, ժողովրդավարությունը եւ կհարգեն մարդու իրավունքները:

2. Հուշագրում սահմանված են Դրամաշնորհի եւ Վարկի մասնավճարների տրամադրման կարգն ու պայմանները: Մասնավորապես, ըստ Հուշագրի 5-րդ հոդվածի՝ մասնավճարների տրամադրումն իրականացվելու է կողմերի միջեւ ստորագրված իրավական պարտավորության՝ համաձայնագրերի հիման վրա, իսկ մասնավճարների վերաբերյալ որոշումը կայացնելու է Եվրոպական միության բյուջեի հարցերով զբաղվող մարմինը: Դրամաշնորհն ու Վարկը, ըստ Հուշագրի 6-րդ հոդվածում նախատեսված իրավապայմանի, ենթակա է փոխանցման ՀՀ կենտրոնական բանկ, որը գործելու է Հայաստանի անունից՝ որպես գործակալ (այսուհետ՝ Գործակալ):

Տրամադրվող մակրոֆինանսական աջակցության կառավարման նպատակով Հայաստանի Հանրապետության եւ Գործակալի վարչական ընթացակարգերի ու ֆի-նանսական շրջանառության օպերատիվ, ինչպես նաեւ աջակցության փաստացի գնահատման գործառույթներն ստանձնելու է Հանձնաժողովը՝ի դեմս իր գործակալների, փորձագետների եւ լիազոր ներկայացուցիչների:

Ըստ Հուշագրի 4-րդ, 7-րդ եւ 13-րդ հոդվածների՝ այդ փաստաթղթի անբաժան մասը կազմող 1-ին եւ 2-րդ հավելվածներում համապատասխանաբար ներկայացված են մակրոֆինանսական աջակցության մասնավճարների տրամադրման նպատակով Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կառուցվածքային բարեփոխում-ների գնահատման չափորոշիչները, ինչպես նաեւ Հանձնաժողովին տրամադրման ենթակա ցուցանիշների եւ հաշվետվության բնույթն ու կառուցվածքը:

3. Հուշագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- նախքան երկրորդ մասնավճարի հատկացումը, Հանձնաժողովին տրամադրել համապատասխան մասնավճարին կից պայմանների պահպանման մասով կատարման վերաբերյալ հայտարարություն,

- ժամանակին եւ ամբողջությամբ կատարել Եվրոպական միության կողմից տրամադրված կամ երաշխավորված վարկերից բխող ֆինանսական պարտավորու-թյունները,

- Հանձնաժողովին տրամադրել համապատասխան ամբողջ տեղեկատվությունը՝ ֆինանսական եւ տնտեսական իրավիճակի մոնիտորինգի ու կառուցվածքային բարեփոխումներում առաջընթացի գնահատման վերաբերյալ,

- Հանձնաժողովի հետ պատշաճ կերպով ապահովել սերտ համագործակցություն:

Հուշագրի 12-րդ, 14-րդ եւ 15-րդ հոդվածներում նախատեսված են դրույթներ՝ մակրոֆինանսական աջակցության գործողության ժամկետի, դրա երկարաձգման, հուշագրի՝ ուժի մեջ մտնելու եւ փոփոխության պայմանների վերաբերյալ:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հուշագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված ՀՀ արտաքին քաղաքականության սկզբունքներից եւ պետության առջեւ դրված սահմանադրաիրավական այլ խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի փետրվարի 15-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 ապրիլի 2011 թվականի
ՍԴՈ-955